

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲԱՂԱԲԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՆԱԿ Է





ԵՄ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻԹՈՑՈՒՄԸ ԱՐՄԵՆԻԱԻ ՆԱՍՏ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Գրքույկը մշակվել է Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Բնակչության պաշտպանության ուժեղացումը Հայաստանում» թվինինգ ծրագրի շրջանակներում: Գրքույկի պարունակությունը պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հայաստանի Հանրապետության բնակիչներին

Այս գրքույկը նախատեսված է Հայաստանի Հանրապետության բոլոր բնակիչների համար՝ որպես ուղեցույց արտակարգ իրավիճակներին ավելի լավ նախապատրաստվելու նպատակով: Այն ներառում է կարևոր տեղեկատվություն՝ սկսած տեխնածին վթարներից ու բնական աղետներից մինչև ծայրահեղ եղանակային պայմաններ և տեղեկատվական անվտանգության սպառնալիքներ:

Անորոշությունները և ոչ ստանդարտ իրավիճակները հաճախ առաջացնում են տագնապի զգացողություն: Սակայն տեղեկացվածությունն ու պատրաստվածությունը լավագույն միջոցներն են նման իրավիճակներում հանգստություն և վճռականություն պահպանելու համար: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և առկա ռիսկերը՝ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքացի տեղեկացված լինի հնարավոր վտանգների մասին և իմանա՝ ինչպես գործել արտակարգ իրավիճակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԵՔ Է, ՈՐԸ ՄԵԼԵՔ ՊԵՏՔ Է ԱՄԵՆ ՕՐ ՊԱՇՏՊԱԼԵՆԵՔ ԵՎ ԱՄՐԱՊԼԴԵՆԵՔ:

ՊԱՅԵ՛Ք ԳՐՔՈՒՅԿԸ ՁԵՁ ՄՈՏ

Կառավարությունը, համայնքներն ու մարզերը, քաղաքապետարանները, ընկերություններն ու կազմակերպությունները պատասխանատու են հասարակության բնականոն գործունեության ապահովման համար: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ոք, ով ապրում է Հայաստանում, կիսում է մեր երկրի անվտանգության և ապահովության հավաքական պատասխանատվությունը: Երբ մեզ ինչ-որ բան է սպառնում, միմյանց օգնելու մեր պատրաստակամությունը կարևորագույն արժեքներից մեկն է դառնում:

Ձեր պատրաստակամությամբ դուք նպաստում եք մեր երկրի ծանր փորձությունները հաղթահարելու կարողության բարելավմանը և դիմակայունության բարձրացմանը:

Ի՞նչ կանեիք, եթե ձեր առօրյան գլխիվայր շրջվեր

Արտակարգ իրավիճակները կարող են ստեղծել այնպիսի պայմաններ, երբ հասարակությունը դադարում է գործել ընդունված նորմերի համաձայն: Կլիմայի փոփոխությունն արդեն իսկ խթանում է այնպիսի երևույթների հաճախացումը, ինչպիսիք են ջրհեղեղները և անտառային հրդեհները: Աշխարհի ցանկացած անկյունում տեղի ունեցող իրադարձությունները կարող են ազդել նաև մեզ վրա՝ առաջացնելով, օրինակ, որոշ սննդամթերքների տեսակների պակաս:

Կենսական նշանակություն ունեցող ՏՏ համակարգերի խափանումները կարող են լուրջ հետևանքներ ունենալ, այդ թվում՝ խաթարել էլեկտրամատակարարումը և կապի համակարգերը: Մեր առօրյան կարճ ժամանակում կարող է լցվել բազմապիսի խնդիրներով:

Այս ամենին միանում են նաև ռազմական բախումների հավանականությունը, սեյսմիկ ակտիվության հնարավոր աճն ու ուժգնացումը, տեխնոլոգիական խափանումներն ու այլ վտանգներ:

Նման պայմաններում նախապատրաստված լինելը դառնում է կենսական անհրաժեշտություն, քանի որ.

- դադարում է էլեկտրասնուցման, ջեռուցման մատակարարման բնականոն գործընթացը,
- դժվարանում է սնունդ պատրաստելն ու պահելը,
- սննդամթերքը և այլ ապրանքները կարող են սպառվել խանութներում,
- կենցաղային կարիքները հոգալու համար չկա ջուր,
- անհնար է մեքենան լիցքավորելը,
- վճարային քարտերն ու բանկոմատները չեն աշխատում,
- բջջային կապի ցանցերն ու համացանցը չեն աշխատում,
- հասարակական և տրանսպորտային այլ միջոցները կանգ են առել,
- դժվարանում է դեղորայք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելը:

Խորհեք այն մասին, թե ինչպես դուք և ձեր շրջապատի մարդիկ կկարողանայիք հաղթահարել մի այնպիսի իրավիճակ, երբ հասարակական ծառայությունները չեն գործում այնպես, ինչպես սովորաբար գործում էին:

ՁԵՐ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

Ձեր քաղաքապետարանը (համայնքապետարանը) պատասխանատու է հասարակական ծառայությունների շարունակականության ապահովման համար՝ նաև արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում:

Մինևույն ժամանակ, յուրաքանչյուր անհատ իր հերթին պատասխանատու է սեփական անվտանգության համար: Ճիշտ նախապատրաստված լինելը հնարավորություն է տալիս հաղթահարել բարդ իրավիճակները՝ անկախ դրանց առաջացման պատճառներից:

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում առաջին հերթին պետք է օգնություն ցուցաբերել առավել խոցելի խմբերին, իսկ հասարակության մնացած մասը պետք է պատրաստ լինի որոշ ժամանակ գործել ինքնուրույն: Որքան լավ նախապատրաստված լինեք, այնքան մեծ կլինի նաև ձեր կարողությունը՝ աջակցելու այլոց, ովքեր այդ պահին ինքնուրույն չեն կարող հաղթահարել իրավիճակը:

Կարևորագույն պայմաններն են՝ ունենալ խմելու ջուր, սնունդ, ջեռուցման միջոցներ, ինչպես նաև վտահ աղբյուրներից՝ իշխանություններից ու լրատվամիջոցներից տեղեկատվություն ստանալու հնարավորություն: Նույնքան կարևոր է կապի միջոցների ապահովվածությունը՝ հարազատների և հարևանների հետ շփումը պահպանելու համար: 6-րդ, 7-րդ և 8-րդ էջերում ներկայացված է սննդամթերքի ու անհրաժեշտ պարագաների ցանկ, որոնք նպատակահարմար է ունենալ տանը:

Խորհեք այն հնարավոր վտանգների մասին, որոնք կարող են ազդել ձեր կամ ձեր բնակավայրի վրա. ապրում եք երկրաշարժերի, սողանքների, փլուզումների կամ ջրհեղեղների ռիսկային գոտում: Ուշադրություն դարձրեք նաև՝ արդյոք ձեր տարածքում գործում են վտանգավոր արդյունաբերական օբյեկտներ կամ ձեռնարկություններ, որոնց մասին տեղեկացված լինելը կարևոր է ձեր անվտանգության համար:



Զգուշացե՛ք ապատեղեկատվությունից

Ոչ բարեկամ պետություններն ու կազմակերպություններն մշտապես օգտագործում են ապակողմորոշիչ տեղեկատվություն՝ փորձելով ազդել մեր արժեքների և մեր գործողությունների վրա: Նպատակը կարող է լինել մեր տոկոսությունն ու ինքներս մեզ պաշտպանելու պատրաստակամությունը թուլացնելու ձգտումը:

Ապատեղեկատվությունից և թշնամական քարոզչությունից լավագույն պաշտպանությունը ցանկացած տեղեկատվության աղբյուրին քննադատորեն վերաբերելն է:

- Արդյո՞ք այն փաստացի տեղեկություն է, թե՞ պարզապես կարծիք:
- Ո՞րն է այդ տեղեկատվության նպատակը:
- Ո՞վ է այն հրապարակել:
- Արդյո՞ք աղբյուրը վստահելի է:
- Արդյո՞ք այդ տեղեկատվությունը հասանելի է որևէ այլ տեղ:
- Արդյո՞ք այդ տեղեկատվությունը նոր է, թե՞ հին, և ինչու՞ է այն հրապարակվել հենց այս պահին:



- Փնտրե՛ք տեղեկություններ - քարոզչության և կեղծ տեղեկատվության դեմ հակազդելու լավագույն միջոցը թո առջև դրված խնդիրը պատշաճ կատարելն է:
- Մի հավատացե՛ք անեկոսներին - օգտագործեք մեկից ավելի հավաստի աղբյուրներ, որպեսզի համոզվեք տեղեկատվության արժանահավատության մեջ:
- Ասեկոսներ մի տարածեք - եթե տեղեկությունը վստահելի չի թվում, մի փոխանցեք այն:

ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ահաբեկչական հարձակումները կարող են ուղղվել ինչպես առանձին անձանց կամ խմբերի, այնպես էլ հանրության ու հասարակական կենսական ծառայությունների՝ օրինակ՝ Էլեկտրաէներգիայի մատակարարման կամ տրանսպորտային համակարգի դեմ: Ահաբեկչության իրականացման ձևերը բազմազան են, սակայն որոշ հիմնական խորհուրդներ կարող են կիրառելի լինել տարբեր իրավիճակներում:

- Տեղափոխվե՛ք անվտանգ վայր և խուսափե՛ք մարդկանց մեծ խմբերից:
- Ձանգահարե՛ք 911 կամ 102 հեռախոսահամարով և տեղեկացրեք, որ ինչ-որ կարևոր կամ վտանգավոր բան եք տեսել:
- Ձգուշացրե՛ք նրանց, ովքեր վտանգի մեջ են և օգնեք նրանց, ովքեր օգնության կարիք ունեն:
- Միացրե՛ք ձեր բջջային հեռախոսի անձայն ռեժիմը: Հեռախոսի զանգի ձայնը կարող է բացահայտել թաքնված մարդու գտնվելու վայրը:
- Ձեր բջջայինով որևէ մեկին մի՛ զանգեք, եթե ծայրահեղ անհրաժեշտություն չկա: Եթե ցանցը ծանրաբեռնված լինի, հնարավոր է դժվար լինի կենսական նշանակության զանգեր կատարելը:
- Կատարե՛ք ոստիկանության, փրկարարական ծառայության և պետական մարմինների հրահանգները:
- Մի՛ տարածեք չհաստատված տեղեկատվությունն առցանց կամ այլ եղանակով:



Տնային պայմաններում պատրաստվածության վերաբերյալ խորհուրդներ

Մարդկանց պայմաններն ու կարիքները տարբեր են՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք ապրում եք գյուղական վայրում կամ խիտ բնակեցված քաղաքում, սեփական տանը, թե բազմաբնակարան շենքում:

Այստեղ կարելի է գտնել մի քանի ընդհանուր խորհուրդներ տնային պայմաններում պատրաստվածության վերաբերյալ: Օգտվեք այն առաջարկներից, որոնք համապատասխանում են ձեր ու ձեր հարազատների կարիքներին: Լավ միտք է նաև փորձառություն փոխանակել, միմյանց հետ կիսվել օգտակար միջոցներով ու լուծումներով:

ՍՆՈՒՆԴ

Կարևոր է տանն ունենալ լրացուցիչ սնունդ, որն ապահովում է բավարար կալորիաներ:

Օգտագործե՛ք չփչացող մթերք, որը կարելի է արագ պատրաստել, քիչ ջուր է պահանջում կամ կարելի է ուտել առանց պատրաստման.

- կարտոֆիլ, կաղամբ, գազար,
- պիտանելիության երկար ժամկետ ունեցող հացամթերք, օրինակ՝ պինդ հաց, կրեկեր, չորահաց,
- պանիր, փափուկ պանիր և այլն,
- կաթի փոշի, յուղ,
- արագ եփվող մակարոնեղեն, բրինձ, ձավարեղեն, արագ պատրաստվող կարտոֆիլի խյուս,
- պահածոների զանազան երկարատև պահվող տեսակներ,
- մրգային խյուս, ջեմ, մարմելադ,
- բալով, հապալասով կամ այլ մրգերով պատրաստված, հյութեր կամ այլ ըմպելիքներ (կոմպոտներ), որոնք կարելի է պահել սենյակային ջերմաստիճանում,
- սուրճ, թեյ, շոկոլադ:



ՋՈՒՐ

Մաքուր խմելու ջուրը կենսական նշանակություն ունի: Յուրաքանչյուր չափահաս մարդու համար անհրաժեշտ է օրական առնվազն երեք լիտր խմելու ջուր: Եթե վստահ չեք ջրի որակի հարցում, ապա ճիշտ կլինի եռացնել այն:

Արտակարգ պայմաններում, երբ հնարավոր է, որ զուգարանը չգործի, կարելի է ամուր պոլիէթիլենային տոպրակ տեղադրել զուգարանակոնքի մեջ՝ ժամանակավոր օգտագործման համար: Հիգիենայի պահպանումը, հատկապես ձեռքերի մաքրությունը, շատ կարևոր է վարակների տարածումը կանխելու համար:

Ջրի պահեստավորման և օգտագործման նպատակով խորհուրդ է տրվում ունենալ հետևյալ պարագաները.

- կափարիչով շշեր և դուլլեր՝ ջուր պահպանելու համար:
- պլաստիկ շշեր՝ ջուր սառեցնելու նպատակով (չլցնել մինչև եզրագիծը՝ սառչելիս ճաքելուց խուսափելու համար):
- պահեստավորված հանքային ջուր:
- դատարկ մեծ տարաներ (կանխատերներ)՝ ցանկալի է ծածկվող և ամուր:
- ջրի ծորակ կամ այլ հարմարեցված սարք՝ ջրաբաշխման համար:
- լրացուցիչ մաքուր տարաներ՝ որպես պահուստային ջրամբար, որոնք պետք է պահվեն զով, մուգ և մաքուր միջավայրում:

Ջեռուցում

Ցուրտ եղանակին էլեկտրաէներգիայի անջատումը կարող է արագորեն ցածրացնել տան ներսի ջերմաստիճանը:

Տնային պայմաններում ջերմության պահպանման համար կարելի է հետևել հետևյալ խորհուրդներին.

- հավաքվեք փոքր սենյակում,
- պատուհանները ծածկեք ծածկոցներով կամ հաստ վարագույրներով՝ ջերմությունը ներսում պահելու համար,
- հատակը ծածկեք գորգերով կամ ծածկոցներով՝ ցուրտը նվազեցնելու նպատակով,
- կարող եք սեղանի տակ կառուցել ժամանակավոր «տնակ» ծածկելով այն ծածկոցներով՝ ջերմամեկուսացման համար,
- միշտ հիշեք հրդեհի վտանգի մասին. քնելուց առաջ անպայման մարեք մոմերն ու ցանկացած ջեռուցման սարք,
- օրական մի քանի անգամ օդափոխեք սենյակը՝ թթվածնի մակարդակը բավարար պահելու համար:

ԱՆՅՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՑԱՆԿ՝ ՑՐՏԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՉԱՄԱՐ

- Բրդյա հագուստ,
- տարվա բոլոր եղանակների համար նախատեսված տաք արտաքին հագուստ,
- գլխարկներ, ձեռնոցներ, շարժեր,
- ծածկոցներ,
- քնագորգեր (չերմամեկուսացման նպատակով դրվում է քնապարկի տակ),
- քնապարկեր,
- մուներ (Ներառյալ՝ փոքր մուներ),
- լուցկի կամ կրակայրիչ,
- ջեռուցման այլընտրանքային միջոցներ՝ օրինակ՝ գազի կամ պարաֆինային տաքացուցիչներ:

ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՏԱՅՈՒՄ

Լուրջ միջադեպի դեպքում կարևոր է, որ դուք կարողանաք արագ ստանալ հուսալի տեղեկատվություն պատասխանատու մարմիններից՝ հեռուստատեսության, ռադիոյի և այլ հաղորդման միջոցների միջոցով: Բացի այդ, անհրաժեշտ է կապ պահպանել հարազատների և ընկերների հետ, ինչպես նաև կարողանալ դիմել արտակարգ ծառայություններին (օրինակ՝ 911 կամ շտապ օգնություն):


Խորհուրդ է տրվում ունենալ հետևյալ կապի և տեղեկատվության միջոցները.

- ռադիոընդունիչ՝ աշխատող մարտկոցներով, արևային էներգիայով կամ ձեռքի գեներատորով,
- թղթի վրա գրված կարևոր հեռախոսահամարների ցանկ,
- լրացուցիչ մարտկոցներ և լիցքավորման սարքեր՝ բջջային հեռախոսների և այլ էլեկտրոնային սարքերի համար,
- մեքենայում աշխատող բջջային հեռախոսի լիցքավորման սարք,
- կանխիկ գումար՝ կանխատեսելի խափանումների դեպքում վճարումներ կատարելու համար,
- անհատական դեղատուփ և անհրաժեշտ հավելյալ դեղամիջոցներ
- թաց անձեռոցիկներ և ձեռքերի ախտահանիչ միջոցներ,
- անձեռոցիկներ և տակդիրներ (անհրաժեշտության դեպքում),
- կարևոր փաստաթղթերի թղթային տարբերակներ՝ ապահովագրական պոլիսներ, բանկային տվյալներ, անձնական փաստաթղթեր, մեքենայի գրանցման վկայականներ և այլն,
- լիարժեք վառելիքով բաք՝ տարհանման անհրաժեշտության դեպքում ճանապարհը չընդհատելու համար:

Եթե Հայաստանը տարբեր տեսակի հարձակումների ենթարկվի

Մենք պետք է կարողանանք դիմակայել մեր երկրի դեմ ուղղված տարբեր տեսակի հարձակումներին: Այսօր էլ հարձակումներ են տեղի ունենում մեր SS համակարգերի վրա և փորձեր են արվում ազդեցություն թողնել մեզ վրա՝ օգտագործելով կեղծ տեղեկություններ: Մեզ վրա կարող են նաև ազդեցություն թողնել մեր տարածաշրջանի հակամարտությունները: Հնարավոր հարձակումները ընդգրկում են՝

- կիբերհարձակումներ, որոնք ոչնչացնում են կարևոր SS համակարգերը,
- ենթակառուցվածքների դիվերսիա (օրինակ՝ ճանապարհներ, կամուրջներ, օդանավակայաններ, երկաթուղիներ, էլեկտրական մալուխներ և ատոմային էլեկտրակայաններ),
- ահաբեկչական հարձակումներ, որոնք ազդեցություն են թողնում մեծ թվով մարդկանց կամ կարևոր կազմակերպությունների վրա,
- Հայաստանի որոշում կայացնողների կամ բնակիչների վրա ազդեցություն թողնելու փորձեր,
- խաթարված տրանսպորտային կապեր, որոնք հանգեցնում են սննդամթերքի և այլ ապրանքների պակասի,
- ռազմական հարձակումներ, օրինակ՝ օդային հարվածներ, հրթիռային հարձակումներ կամ պատերազմական այլ գործողություններ:



Արտակարգ դրության իրավական ռեժիմ

Կառավարությունը կարող է որոշել երկրում Արտակարգ դրության իրավական ռեժիմ մտցնել Հայաստանի ինքնապաշտպանության հնարավորությունները մեծացնելու համար: Արտակարգ դրության դեպքում կիրառվում են խաղաղ ժամանակվա օրենքները, սակայն կարող են կիրառվել նաև այլ օրենքներ: Օրինակ, պետությունը կարող է մասնավոր սեփականություն պահանջել, որը հատուկ նշանակություն ունի Հայաստանի համընդհանուր պաշտպանության համար:

Տվյալ իրավիճակում ողջ հասարակությունը պետք է մեկտեղի իր հավաքական ուժը՝ ապահովելու համար կենսական նշանակության ծառայությունների շարունակականությունը: Արտակարգ դրության դեպքում դուք կարող եք հավաքագրվել տարբեր ձևերով օգնություն տրամադրելու նպատակով:

Արտակարգ դրության ռեժիմի սահմանման մասին տեղեկատվությունը հեռարձակվում է ռադիոյով, հեռուստատեսությամբ:

ԱՇԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ազդարարման և տեղեկատվական համակարգը (կարևոր հրապարակային հայտարարությունը) օգտագործվում է արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպիսիք են վնասակար նյութերի արտանետումները, պայթյունի վտանգով հրդեհները, անտառային հրդեհները և այլ բնական աղետները:

ԱՇԴԱՐԱՐՈՒՄ

ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման կազմակերպություններին, մարմիններին, բնակչությանն ազդարարման համակարգերով և այլ միջոցներով ազդարարման ազդանշանների, տազնապի կամ հավաքի, հնարավոր վտանգների, ինչպես վարքականոնների և նաև պաշտպանական միջոցառումների անցկացման անհրաժեշտության մասին հրատապ տեղեկատվության տրամադրումն է:

Ազդարարման համակարգերը տեղակայված են փոքր բնակավայրերի և քաղաքների մեծ մասում և Հայաստանի ատոմակայանի շրջակայքում:

Եթե լսում եք «**Ներս մտե՛ք, փակե՛ք պատուհանները, դռներն ու օդափոխությունը և լսե՛ք տեղեկատվությունը**» ազդարարումը, ապա վերջինս նախատեսված է հրապարակային տեղեկատվություն տրամադրելու համար:

«Ուշադրություն բոլորին» և «Օդային տազնապ»

Ազդարարման ազդանշանների տեսակներն են՝

«Օդային տազնապ»

«Ուշադրություն բոլորին»

«Օդային տազնապ» ազդանշանը տրվում է Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման դեպքում.

«Ուշադրություն բոլորին» ազդանշանը՝ արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա գինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման ավարտի դեպքերում:

Օդային հարձակման տազնապը ենթադրում է, որ դուք պետք է անմիջապես պատսպարան (թաքստոց) գտնեք, օրինակ՝ օդային հարձակման համար նախատեսված պատսպարանը կամ այն շենքի նկուղը, որտեղ դուք գտնվում եք:

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում էլեկտրաչափակների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան 2-3 րոպե տևողությամբ:

Բջջային հեռախոսներին ուղարկվում է կարճ հաղորդագրություն՝ «Օդային տազնապ» պատսպարվել պաշտպանական կառույցներում:

Բնակչությանը նախազգուշացնելու նոր եղանակներ կարող են կիրառվել:



Կարևոր է իմանալ

ԻՆՔՆԱԿՐԹՎԵ՛Ք

Սովորե՛ք առաջին օգնություն ցուցաբերել: Ձեր գիտելիքները կարող են կյանքեր փրկել: Եթե դժբախտ պատահարից կամ այլ լուրջ միջադեպից հետո առաջինը դուք եք հայտնվել դեպքի վայրում, ապա զանգահարեք 911 ա/կամ շտապ օգնության 103 հեռախոսահամարով: Նույնիսկ եթե ձեր վճարովի SIM քարտի հաշվի գումարը սպառված լինի, կամ ձեր բջջային հեռախոսը SIM քարտ չունենա, ամեն դեպքում դուք կկարողանաք զանգահարել 911 հեռախոսահամարով:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄՆԵՐ

Գրեք կարևոր հեռախոսահամարները, հասցեները, մոտակա պատասպարանների կամ այլ թաքստոցների գտնվելու վայրերը:

Այս գրքուկի նպատակն է օգնել բնակչությանը առավել պատրաստված լինել տարբեր արտակարգ իրավիճակներում.

- խոշոր վթարներ,
- ծայրահեղ եղանակային պայմաններ,
- ռազմական հակամարտություններ:

Այս գրքուկը պետք է լինի մի ուղեցույց, որը կօգնի ավելի ապահով և կազմակերպված գործել ցանկացած իրավիճակում: Այն նաև կարող է ծառայել որպես հիշեցում այն մասին, թե ինչպես պետք է պատրաստ լինել բոլոր այս դեպքերին:

Լավ գաղափար է այս գրքուկի բովանդակության մասին խոսել ձեր ընտանիքի անդամների, ընկերների կամ հարևանների հետ, որպեսզի բոլորը գիտակցեն իրենց գործողությունների հաջորդականությունը արտակարգ իրավիճակներում և պատրաստ լինեն ճիշտ գործել:

